

յուի մինչեւ իւր վերջին սերունդին
մէջ այն յանցանք, զոր թօղած է մե-
զաց սկզբնագործն։

Այսպէս ահամ մի կողմէն տիեզե-
րական աւանդութեամբ ճշմարտուած
անկումն և փոխանցութեամբ յաջոր-
դած բնական եւ բարոյական ախտն
մնալով մարդոյ մէջ և միւս կողմէն ալ-
մարդոյ վախճաններն նյն կատարելու-
թեան մէջ ըլլալով, ինչ որ էին անհը-
նացանդութենէ յառաջ, թէ և մարդն
նկանին մոլորած լինի, գարձեալ փըր-
կագործութիւն մի կամ ուրիշ որ և է
միջոց մի անհրաժեշտ է մարդն իւր
վախճանին արժանաւորելու համար։
Այս բնական հետեւութիւնն է այն
վիճակին, որց մէջ կը գտնուի մարդ-
կային բնութիւնն։

Փրկագործութեան մը անհրաժեշտ
կարեւորութիւնը հաստատելն զինի
կը մնայ այժմ որոնել թէ ո՞ր կարդի
մէջ կարելի է զայն գտնել։ Այս՝ կամ
մարդկոյին կարգին մէջ կամ աւելի
գերագոյն էակի մէջ կարելի է գտնալ։

(Նարանիվէլ ։)

ՀԱՆԴԵՍ

ԷՆԹԵՐՅՄԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԻ ՆՈՐԱՊԱՍԿ ԿԱՅՍԵՐ

Ամսոյ 6ին Տեղւոյս Կառավարու-
թեան կողմէն յատուկ հրաւիրագրով
տեսն Վանքերէն խնդրուած էր երկ-
րորդ օրը Կառավարութեան պալատը
ներկայ գանուիլ Նորապասկ Կայսեր
հրովարտակի ընթերցման։ Որոշեալ
ժամուն մեր Ամեն, Ա. Պատրիարքը երեք
Եպիսկոպոսաց և երեք վարդապետաց
ընկերութեամբ գնաց Կառավա-
րութեան պալատը, ուր մի ընդարձակ

սրահ պատրաստուած էր ընթերցման
հանդիսի համար և ուր արդէն ժողո-
ված էին թէ գատարանի և թէ զե-
նուորական պաշտօնեայք, ինչպէս եւ
իւրաքանչիւր աղդաց հոգեւոր գլուխ-
ներն . այն է Յունաց Պատրիարքը,
Յոյն Կաթոլիկաց Եպիսկոպոսը, Լա-
տինաց Պատրիարքի կողմէն փոխանորդ-
մի եւ Հրէից Խախամը ։ Երբ պաշտօ-
նական անձննք ամբողջացան, Վում,
Կառավարիչն Հրովարտակ ի ձեռին
սրահը մտնելով՝ յարդանօք Թահրիաթ
Միւտիւրին ներկայացց կարդալու-
համար։ Արտաքոյ պրահին ժողովար-
դեան խուռն բազմութիւն ցուած էր
հրովարտակը լսելու փափագանօք . գո-
րաց հաղարապետի առաջարկութեամբ
Կառավարիչը հրամայեց ներս առնել
սրահի տանելուն չափ, և ապա Թահ-
րիաթ Միւտիւրին կարդաց բարձր
ձայնիւ նախ հրովարտակը եւ յետոյ
Կառավարչին ուղղեալ գիրն, որով կը
ծանուցուեր նախորդ Կայսեր անկման
պարագաները և Սուլթան ՄՈՒՐԱՏԱՅ
Գահակալութիւր։ Այսուհետեւ Յունաց
Պատրիարքը յունական լեզուով բարձ-
րագիւմական ճառ մեր Ս. Պատրիարքը Տաճկական բար-
դարով անպատրաստական բանախո-
սութեամբ մի Ապտիւլ-Ապիվի օրուն
Օսմաննետն պետութեան վտանգաւոր
և տիսուր կացութիւնը բացատրեց և
շնորհակալութիւն յայտնեց Նախախո-
սամութեան և Թուրքիոյ Հայրենասիր-
աց, որը համայն երկիրը մեծ վտան-
գէ մը աղատեցին և ապա Նորապսակ
Կայսեր իենաց, Նախարարաց յարա-
տեւ հայրենասիրութեան և զինուորա-
կանաց քաջութեան համար բարեմաղ-
թութեամբ վերջացց խօսքը։ Բոլոր
հանդիսականք բանիւ բերանոց շնորհա-
կալութիւն յայտնեցին մեր Ս. Պատրի-
արքին։

**Ա.Հաւասիկ Ա. Պատրիարքի բանաւ
խօսութեան համառօտագրութիւնը :**

« Պարտք մի կատարելու համար
յանկարծ ոտքի կ'ելլեմ առանց նա-
խապատրաստութեան . ուստի ներկայ
գտնուող Եֆէնտիներուն ներողամշ-
տութիւնը կը խնդրեմ :

Համայն արարածոց կենաց պէտքե-
րըն հոգացող եւ ամեն ժամանակ ու
ամեն վայրկեան Նախախնամող՝ Տիե-
զերաց Աստուածն է :

Նա աշխարհի բոլոր աղջաց վերայ
հսկելու , նոցա բարօրութեան , յառա-
ջադիմութեան և խաղաղութեան հա-
մար թագաւորներ հաստատած է . ո-
րոց հրամայած է խնամ ունենալ իրենց
հպատակաց կեանքին , պատուցն եւ
ընչից վերայ :

**Ա.յս աստուածուստ սահմանեալ
թագաւորներէն մի եւս մեր Բարեխը
նամ Թագաւորն ըլլալով՝ ըստ իւր պար-
տաւորութեան իրեն յանձնուած ա-
մեն հպատակները իբրեւ զորդիս խը-
նամելու վերայ էր և է : Բայց ինչպէս
շատ անդամ շատ տէրութեանց մէջ
պատահած են եւ կը պատահին միշտ
աշխարհի բաղմաղիմի ձախորդու-
թիւնք , նյնապէս հետ զհետէ անթիւ
ձախորդութիւնք պատահեցան Օսմա-
նեան Բարեխնամ Տէրութեան մէջ , և
օր ըստ օրէ շարիք ՚ի վերայ ըսրեաց
կուտակելով՝ ծայրագոյն սամտիւ-
թեամբ բավանդակ կայսրութիւնը այ-
րեց ու մրկեց առանց երբէք կենդա-
նութեան նշան մի թողթու : Ա.յս ար-
խուր կացութեան մէջ գերեզմանին
դուռը համարող անկարող և անօգնա-
կան հիւանդի մը պէս իւր յոյալ միայն
Աստուածոյ ամենաիշարող զօրութեան
վերայ դնելով՝ իւր անբումելի ցաւոց
դեզն ու դարմանը անտի կը սպասէր :**

**Ա.յս ցաւալի վիճակը Թուրքիոյ բո-
լոր բնակչաց յայտնի է :**

Ահա՛ յանկարծ Աստուած , որ ա-
մենակարող է , Օսմանեան Մէծազօր
Կայսերութեան բարեջան նախարա-
րաց և հոգեւորականաց սրտին մէջ
հայրենասիրական փորբիկ կոյց մի բար-
բորեց , որ հուալ ընդ հուալ հրահար-
ուելով՝ երկրին կորուստ սպասնացող
ամեն աղջ տներն ՚ի մի վայրկեան այրեց
և ոչնչացրց անձայն և անջոււկ . մէծ
և արժանաւոր գործ ժթ՛ր դարու :

**Ա.շխարհի պատմութեան մէջ նը-
մանը չը տեսնուած գործ մի էր այս ,
մանաւանդ մէծ գաս մի Եւրոպացի
հայրենասէրներուն , որք հայրենեաց
բարեկարգութիւնն ու անդորրութիւ-
նը բիրաւոր հայրենակցաց արեամբ
կը գնեն . մինչդեռ Թուրքիոյ հայրենա-
սէր Նախարարը եւ հոգեւորականք
փրկեցին հայրենիքը , փրկեցին Պետու-
թիւնը և փրկեցին համայն Թուրքիոյ
բնակիչները մի քանի ժամանան մէջ ա-
ռանց շիթ մը արեան՝ բաղմեցնելով՝
Օսմանեան գահին վերայ Սուլթան
ՄՈՒՐԱՏ Ե . ըստ բաղձանաց համայն
հպատակաց :**

**Ա.յս փրկաւէտ յեղափոխութեան
վերայ Թուրքիոյ սուգն՝ միփթարու-
թեան , լայն եւ ողը՝ խնդութեան
փոխուեցաւ :** Ամեն ոք իւր աչքը ,
ձեռքն ու սիրտը դէսլ յերկինս բարձ-
րացաց երախտագիտական սուրբ ըլլ-
գացմամբ շնորհալաւ լինելու Աստուած-
մէ , որ շնորհեց իրեն հայրենասէր ,
արդարասէր եւ որդեսէր Կայսր մի ,
Սուլթան ՄՈՒՐԱՏ Ե : Ամեն ոք չերմ
եւ սրտագին բարեմաղթութիւններ
ուղիեց առ Բարձրեան Օդոստ . Կայ-
սեր կենաց և պետաթեան բարելա-
ւութեան համար : Ես ալ Միաբանու-
թեանս և համայն Հայ-Ազգիս ուրա-
խական եւ բարեմաղթական անկեղծ
դգացմանց թարգման հանդիսանալով՝
նախ կը շնորհաւորեմ Սուլթան Մու-

բատի երջանկոսիթմ Գահակալութիւնը : Եւ ապա կը խնդրեմ Աստուծմէ պահել զԿայսրն իւր պարագայինք ՚ի խուա ՚ իւր երջանիկ և երկար կենօք . միշտ վառ պահել բարեջան Նախարարաց սրտին մէջ հայրենասիրութեան ոգին , որ առաւել եւս իմաստութեամբ խորհին և գործեն ՚ի շնութիւն Մեծաղօր Տէրութիւն և ՚ի բարօրութիւն ամեն հպատակաց . տալ զօրավարաց և զօրաց քաջութիւն քազիի , քաջութիւն սրտի եւ յաջողութիւն զինուց :

Կեցցէ և հաղար կեցցէ Առողթան ԻՌԻՒԱՏ թագաւորն և ամենասիրելի Կայսրն մեր :

ՊԱՏՄԱԿԱՆ

Օսմանեան նախարարաց մէջ հըս-
չակաւոր եւ մէծանուն Ծիփաթ Փա-
շայի Յունաստանի և Եգիպտոսի ա-
պատամբութեան , Ուուսաց պատերազ-
մին , ՚ի Վիենայ գեսապանութեան , և
՚ի Բ. Դուռն իւր նշանաւոր հանճա-
րով և խոհեմութեամբ վարած պաշ-
տօններուն միջոցին , ՚ի գրի առած քա-
ղաքական և գեսապանագիտական ամե-
նակարեւոր խնդիրները եւ գեպքերը
և առ Բ. Դուռու գրած նամակներն ,
որ արդէն Տաճկերէն լեզուաւ հրա-
տարակուած է , արժան դատեցինք
նոյն հետաքրքրական և դիտութեան
արժանի գործերը կարելի եղածին չափ
մասն առ մասն թարգմաննել հայերէն
աշխարհիկ լեզուաւ , և Հանդիսիս մի-
ջոցաւ հետղինուէ հրատարակել , ըս-
յուսով որ բարեմիտ և ուստումնասէր
ընթերցողաց ախորմելի կը թուի :

Ասպատաճաբուր-
գլարդաղեպ :

ՍԿԻԶԲՆ ԳՈՐԾՈՅՆ

ՅՈՒՆԱՏ ազգը ՚ի սկզբանէ անոնի
Օսմանեան հզօր և արդարակորով Պե-
տութեան հովանաւորութեան տակ
տաղալարած , և այսքան պէսպէս բա-
րութեանց և անչափ չնորհաց և երախ-
տեաց արժանացած էր : Այս հպա-
տակ ազգէն (*) 1831 (1821) թուա-
կանի միջոցները , նախ Էֆլակի կողմե-
րը , և յետոյ Մորայի կղզին և նորա
շղականները , և Միջերկրական ծովուն
կղզիներէն ոմանք գլուխ վերուցին եւ
ապստամբեցան Օսմանեան Պետու-
թեան գէմ . և յանդուգն համարձա-
կութեամբ պէսպէս չարեաց և անար-
ժան գործոց ձեռնամուխ եղան : Ուս-
տի Օսմանեան Պետութիւնը պարտա-
ւորեցաւ յամառ և անզուսպ ապրու-
տամբները պատուհասել և սպատիւլ:
Վասնորոյ այս ապատամբ հպատակաց
վերայ խումբ խումբ բանակներ կաղ-
մեց , որով ստահակաց շատերը պատ-
մեցան , և յափշտակուած կայսերա-
կան բերդերը եւ ամրոցները նոյա-
ձեռքէն ազատեցան : Ապստամբներէն
անոնք որ անձնատուր հնագանդեցան,
գթութիւն եւ ներողութիւն գտան :
Սակայն սակաւը օմանք յապստամբաց
հաստատուն մաօք իրենց յամառու-
թեան մէջ կացին մնացին : Եւ մինչ-
դեռ Բ. Դուռու այս ստահակները լըս-
պելու պէտք եղած պատրաստութիւն-
ները ամենայն ջանիւք յառաջ կ'տա-
նէր , ահա 1842 (1827) թուին եւ
Տէ՛կալ ամսոյ սկիզբները , Անդղիոյ Տէ-
րութիւնն Բ. Դունէն ինդրեց , որ Մո-
րոյի և նորա շղականները գտնուած
կրկներուն մէջ խուած ժողովուրդք ը-
գտնուելով ինքնանք միայն բնակելու

(*) Այս թուականին յօյն կղերք մէծամէծ իր-
ուվութիւններ յարուցին ընդգեմ Հայոց աԵրու-
սաղէմ Բնթէ՛մի եկեղեցւոյն համար : Պարմ . Ա.
Շահումէդ . Յանահիք :